«Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ԿԱՐԳ

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍՄՆԱՑԱԾԵՐԵԽԱՆԵՐԻ

ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆԵՎՈՒՂՂՈՐԴՄԱՆ

1. Սույնկարգովկարգավորվումենպարտադիրկրթությունիցդուրս մնացած դպրոցահասակերեխաներիբացահայտման և ուղղորդման (կրթության մեջ ներառման)՝ բոլոր շահագրգիռ և պատասխանատու կառույցների համագործակցությանհետկապվածհարաբերությունները:
2. Պարտադիր ուսուցումից դուրս մնացած են համարվում 6-18 տարեկան՝

- հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) չհաճախած /որևէ ուսումնական հաստատությունում չհաշվառված,
- որևէ ուսումնական հաստատությունում սովորած, հաշվառված, սակայն 5 աշխատանքային օր առանց համապատասխան փաստաթուղթ ներկայացնելու չհաճախած/չհաճախող,
- ուսումնական հաստատություն հաճախած, սակայն ծնողի/նրա օրինական ներկայացուցչի/ դիմումի հիման վրա ուսումը անավարտ թողած երեխաները:

1. Ուսումնական հաստատություն չհաճախած կամ որևէ ուսումնական հաստատությունում չհաշվառված լինելու դեպքում պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտելու և ուղղորդելու համար՝

- Յուրաքանչյուր ուսումնական տարվա սեպտեմբերի 1–ի դրությամբ դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դասարանների կազմավորման ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԿՏԱԿ), համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և դպրոցների կառավարման համակարգի տվյալները և «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում ներկայացնում է 6–18 տարեկան այն երեխաների տվյալները, որոնք որևէ հաստատությունում հաշվառված չեն:

1. Բացահայտված երեխաների ցուցակները, ինչպես նաև էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան հասանելի են «Պարտադիր

ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում և ԿՏԱԿ-ի կողմից համակարգ մուտք գործելու համար հաշիվներ են տրամադրվում հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներներին՝

- ՀՀ կառավարությանը՝ ի դեմս Կրթության տեսչական մարմնի.

2) ՀՀ կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը.

3) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը.

4) Տարածքային կառավարման մարմիններին.

5) Տեղական ինքնակառավարման մարմիններին.

6) ՀՀ առողջապահության նախարարությանը.

7) ՀՀ ոստիկանությանը.

8) Խնամակալության և հոգաբարձության մարմնին.

9)Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին.

10)Սոցիալական դեպք վարողներին:

5. ՏԻՄ ղեկավարը և տարածքի սոցիալական ծառայությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում քայլեր են ձեռնարկում նշված երեխաների կարգավիճակը ճշտելու, ուսումնական հաստատությանը չդիմելու պատճառները բացահայտելու, ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1061-Ն N 1061-Ն որոշմամբ սահմանված կարգով սոցիալական դեպք վարելու համար՝ ապահովելով երեխայի դպրոց հաճախելը:
6. Եթե երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ՏԻՄ ղեկավարն ապահովում է երեխայի կարիքի, այդ թվում՝ հոգեբանամանկավարժական գնահատումը և անհատական ուսումնական պլանի կազմումը՝ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների միջոցով:
7. Որևէ ուսումնական հաստատությունում սովորած, հաշվառված, սակայն ուսումնական հաստատություն չհաճախելու դեպքում՝

1)եթե երեխան ուսումնական հաստատություն չի հաճախում 5 աշխատանքային օր անընդմեջ, ուսումնական հաստատությունը կառավարման էլեկտրոնային համակարգում կատարում է համապատասխան գրառում (ստեղծում է հայտ)՝ նշելով պատճառը:

2) «Սովորողի հիվանդությունը» որպես պատճառ նշելու դեպքում հայտը տեսանելի է դառնում սոցիալական դեպք վարողին և այն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններին, որտեղ հաշվառված է տվյալ երեխան:

3) Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունը հաստատում կամ մերժում է դպրոցի կողմից բացված հայտը։

4) Եթե բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունը հաստատում է հայտը, ապա կատարում է նաև նշում, որ երեխան արդեն կարող է հաճախել ուսումնական հաստատություն։ Այս դեպքում դպրոցը ևս նշում է կատարում, որ երեխան արդեն հաճախում է ուսումնական հաստատություն։

5) Եթե բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունը մերժում է հայտը, այդ մասին տեղեկատվությունն տեսնում է սոցիալական դեպք վարողը։

6) Եթե բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունը 2 աշխատանքային օրվա ընթացքում ոչ մի գործողություն չի կատարում ուսումնական հաստատության հայտի վերաբերյալ, ապա այդ մասին տեղեկատվությունն ևս սոցիալական դեպք վարողը տեսնում է ։

7) «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» համակարգում հայտ կարող է բացել նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունը։ Տվյալ հայտը տեսանելի է ինչպես այն ուսումնական հաստատությանը, որտեղ հաշվառված է երեխան, այնպես էլ տվյալ տարածքը սպասարկող սոցիալական դեպք վարողին։

8) Հայտեր կարող է ստեղծել նաև սոցիալական դեպք վարողը, եթե իր աշխատանքի ընթացքում բացահայտել է երեխայի դպրոց չհաճախելու դեպք՝ անկախ պատճառից ։

9) Եթե ուսումնական հաստատության և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատության կողմից բոլոր գործողությունները կատարվել են, սոցիալական դեպք վարողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում փակում է տվյալ հայտը և արխիվացնում։

10) Եթե բացակայության պատճառը հնարավոր չէ ճշտել, կամ այնպիսինն է, որ ուսումնական հաստատության ռեսուրսները բավարար չեն այն վերացնելու և կարող է հանգեցնել երեխայի ուսումնական հաստատությունից դուրս մնալուն, ուսումնական հաստատությունը, երեք աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին տեղյակ է պահում երեխայի բնակության վայրի ԽՀՄ-ին և սոցիալական ծառայությանը՝ ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1061-Ն N 1061-Ն որոշմամբ սահմանված կարգով սոցիալական դեպք վարելու համար և ապահովելու երեխայի դպրոց հաճախելը։

8. Ուսումնական հաստատություն հաճախելու, սակայն ծնողի դիմումի հիման վրա ուսումը կիսատ թողնելու դեպքում՝

- Ուսումնական հաստատության տնօրենը ծնողի դիմումի հիման վրա երեխային հանում է հաշվառումից, եթե դիմումում հստակ նշված է տեղափոխման վայրը, առկա է տվյալ ուսումնական հաստատությունից երեխային ընդունելու վերաբերյալ համաձայնություն։ Եթե երեխան ծնողի դիմումի հիման վրա դուրս է եկել ուսումնական հաստատություն

հաշվառումից և այլ դպրոցում չի հաշվառվել, այն դպրոցը, որտեղ պետք է տեղափոխվի երախան, երեք աշխատանքային օրվա ընթացքումբացում է նոր հայտ, որը տեսանելի է երեխայի բնակության ԽՀՄ-ին և սոցիալական ծառայությանը՝ ՀՀ կառավարության 10 սեպտեմբերի 2015 թվականի N 1061-Ն N 1061-Ն որոշմամբ սահմանված կարգով սոցիալական դեպք վարելու և երեխայի դպրոց հաճախելը ապահովելու համար:

- Բացված հայտերի մասին ամբողջ տեղեկատվությունը, պատմությունը և աշխատող կողմերի գործողությունները հասանելի են բոլոր շահագրգիռ և պատասխանատու կառույցներներին:

9. Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման հետ կապված սույն կարգով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարությունը 2015 թվականի սեպտեմբերի 10-ին ընդունած N 1044-Ն որոշման շրջանակներում: